

**ՀՀ ԿԳՆ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր**  
**5 տարեկանների ուսուցում**  
**ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**  
**2016-2017 ՈՒՍԱՐԻ**  
**«Իմացումի հրճվանք» ծրագիր. ուսումնառության առաջին տարի**

Ք. Երևան

« » ..... 2016թ.

**Պայմանագրի կողմերը**

ՀՀ ԿԳՆ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ի ..... դպրոցը (այսուհետ՝ Դպրոց) ի դեմս տնօրեն ..... (այսուհետ՝ տնօրեն) և ..... (այսուհետ՝ Սան) օրինական ներկայացուցիչ ..... (այսուհետ՝ Օրինական ներկայացուցիչ) կնքում են սույն պայմանագիրը 5 **տարեկանների ուսուցման** կազմակերպման վերաբերյալ:

**1. Պայմանագրի առարկան**

Կրթահամալիրում իրականացվող **«Ստեղծողի մոբիլ դպրոց»** հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) Սանի առանձնահատկություններին համապատասխան ուսուցման և զարգացման կազմակերպումն է, այդ թվում՝

- 1.1 ուսուցման կազմակերպում նախադպրոցականին հարմար պարտեզային միջավայրում.
- 1.2 ամենօրյա անընդհատ ուսուցման կազմակերպում գործունեության միջոցով՝
  - խոսքային՝ թատրոն, խաղ, ռադիո.
  - մարզական՝ մարմնամարզություն, մարզական և այլ շարժուն խաղեր, լող, հեծանիվ.
  - կերպարվեստի-տեխնոլոգիական.
  - բնագիտական-թվաբանական-բույսերի, կենդանիների խնամք.
  - առողջապահական-խնամքի
  - երաժշտական՝ ունկնդրում, երգ, պար, երաժշտական խաղ-ներկայացումներ, դասարան-համույթ, ծես.
- 1.3 ուսուցման կազմակերպում թվային միջոցների՝ պլանշետի-համակարգչի, էլեկտրոնային գրատախտակի, պրոյեկտորի, համացանցի, ֆոտոխցիկի, ձայնագրիչի կիրառմամբ.
- 1.4 ուսումնական գործունեության արդյունքների ներկայացում ամենամսյա ստուգատեսի, ծեսի-տոնի կազմակերպմամբ.
- 1.5 Դպրոցում և տանը համացանցի գործածում ուսումնական նպատակներով. դասվարի (խմբի) բլոգը, դպրոցի կայքը, մեդիագրադարանը, «Պարտեզ» ամսագիրը, «Բզեզ» ենթակայքը, դասվարի էլեկտրոնային հասցեն՝ Ծրագրի կատարման, Սանի ուսումնական գործունեության մասին անընդհատ ու ամբողջական տեղեկատվության միջոցներ.
- 1.6 երեքանգամյա սնունդ՝ նախօրոք հաստատված-հրապարակված ժամատախտակով և մենյուով.
- 1.7 2017թ. սեպտեմբերին մեկամյա ուսուցման ծրագիրը յուրացրած սանը սահմանված կարգով անցում է կատարում ուսուցման երկրորդ տարի:

**2. Օրինական ներկայացուցիչն իրավունք ունի**

- 2.1. ծանոթանալու Սանին առնչվող ցանկացած տեղեկության.
- 2.2. ծանոթանալու «Իմացումի հրճվանք» կրթական ծրագրի դասարանի գործունեության իրականացման կարգին.
- 2.3. ՀՀ օրենսդրությամբ, կրթահամալիրի ներքին կարգապահական կանոններով որոշված կարգով պաշտպանելու Սանի շահերն ու իրավունքները.
- 2.4. ծանոթանալու ծրագրի տարեկան ծախսերի նախահաշվին և դրամական ծախսերի հաշվետվությանը.

- 2.5. անձամբ կամ ծրագրի ծնողական խորհրդի միջոցով վերահսկելու պայմանագրի կատարումը, ծախսերը.
- 2.6. ներկա լինելու, հետևելու, մասնակցելու խմբի (դասարանի) պարապմունքներին:

### 3. **Օրինական ներկայացուցիչը պարտավոր է**

- 3.1. պայմանագիրը կնքելուց առաջ ծանոթանալ ուսուցման ծրագրին, պայմանագրին և կատարել դրանցով նախատեսված պարտականությունները.
- 3.2. տնօրենի կամ դասվարի հրավերով ներկայանալ.
- 3.3. ապահովել Սանի ներկայությունը ամենօրյա ուսումնական պարապմունքներին, մասնակցությունը ուսումնական ճամփորդություններին, ստուգատեսներին, տոներին.
- 3.4. ապահովել Սանին ուսումնական պարապմունքների համար անհրաժեշտ անհատական նյութերով և միջոցներով, ուսումնական անհատական թվային գործիքով (պլանշետ-նեթբուք-նոթբուք-), տանը՝ համացանցով.
- 3.5. սահմանված կարգով ժամանակին տեղեկացնել Սանի բացակայությունների մասին.
- 3.6. ժամանակին կատարել պայմանագրով որոշված վճարումները.
- 3.7. ունենալ էլեկտրոնային հասցե, օգտագործել էլեկտրոնային փոստը, ամեն օր հետևել կրթահամալիրի, դպրոցի կայքին, դաստիարակի բլոգին.
- 3.8. մասնակցել ծնողական կրթական-տեղեկատվական հավաքներին, ուսումնական օրացույցով որոշված նախագծերին, ծնողական սեմինարներին, պատասխանել դասվարի և տնօրենի էլեկտրոնային նամակներին:

### 4. **Տնօրենն իրավունք ունի**

- 4.1. անհրաժեշտության դեպքում հրավիրելու Օրինական ներկայացուցչին.
- 4.2. Օրինական ներկայացուցչի կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում պայմանագիրը լուծելու:

### 5. **Տնօրենը պարտավոր է.**

- 5.1. Օրինական ներկայացուցչին ծանոթացնել ծրագրին, ուսումնառության պայմանագրին, կարգերին.
- 5.2. ապահովել կրթական ծրագրի իրականացման միջավայր, պայմաններ և կազմակերպում.
- 5.3. Օրինական ներկայացուցչի դիմումով և միջոցներով կազմակերպել պայմանագրով չնախատեսված լրացուցիչ ծառայություն՝ նրա հետ կնքելով լրացուցիչ պայմանագիր.
- 5.4. ըստ ծրագրի ծախսերի նախահաշվի՝ ապահովել գումարի ծախսը և սահմանված կարգով հաշվետվություն ներկայացնել.
- 5.5. ապահովել 1-ին բուժօգնության, հոգեբանի, հատուկ մանկավարժի ծառայություն.
- 5.6. սահմանված կարգով կազմակերպել Սանի սնունդը.
- 5.7. Օրինական ներկայացուցչի ցանկությամբ և միջոցներով աջակցել Սանի՝ սահմանված կարգով տրանսպորտային տեղափոխման կազմակերպմանը:
- 5.8. Կազմակերպել կրթական-տեղեկատվական ծնողական հավաքներ:

### 7. **Ծրագրի ֆինանսական ապահովումը**

- 7.1. ըստ սովորողի թվի պետական դրամական հատկացումներ
- 7.2. կրթահամալիրում պետական աջակցությամբ իրականացվող «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի դրամական հատկացումներ
- 7.3. ուսումնառության պայմանագրով որոշված՝ Սանի Օրինական ներկայացուցչի վճար:

### 8. **Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը**

- 8.1. Ծրագրով նախատեսված Սանի սննդի, խնամքի, ուսուցման ծառայությունների համար մեկ ուստարում Օրինական ներկայացուցիչը վճարում է 130 000 (հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ. առաջին մուծումը՝ առնվազն 13 000 (տասներեք հազար) ՀՀ դրամը, կատարում է պայմանագրի կնքման պահին:
- 8.2. Պայմանագրով որոշված վճարումները սահմանված կարգով անել փոխանցումով՝ Կրթահամալիրի հաշվարկային հաշվին. կիսամյակային՝ սեպտեմբերին և հունվարին, կամ ամսական՝ վճարելով 13 000 (տասներեք հազար) ՀՀ դրամ. ամսական վճարման դեպքում վճարումը կատարել մինչև տրված ամսվա 5-ը՝ այն հաշվով, որ առաջին հինգ ամիսների համար վճարումը կատարված լինի մինչև դեկտեմբերի 20-ը, իսկ երկրորդ հինգ ամիսների համար՝ մինչև մայիսի 20-ը:

**9. Պայմանագրի ժամկետը, փոփոխման ու լուծման պայմանները**

- 9.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2016-2017 ուստարվա ավարտը՝ 2017թ հուլիսի 1-ը, Օրինական ներկայացուցչի համաձայնությամբ՝ նաև հուլիս, օգոստոս ամիսներին:
- 9.2. Պայմանագիրը կարող է փոխվել կողմերի համաձայնությամբ: Կատարված փոփոխությունները կամ լրացումները համարվում են Պայմանագրի անբաժանելի մաս:
- 9.3. Պայմանագիրը կարող է լուծվել կողմերից մեկի՝ պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում:

**10. Այլ պայմաններ**

- 10.1. Եթե պայմանագրի լուծման պահին ծնողի կատարած մուծումներն ավելի են, քան պայմանագրով մատուցված ծառայությունները, կրթահամալիրը ծնողին վերադարձնում է մնացորդային գումարը:
- 10.2. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն. պայմանագրի էլեկտրոնային օրինակը հավասարազոր իրավաբանական ուժ ունի:
- 10.3. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո Պայմանագրի օրինակը սահմանված կարգով Դպրոցում պահպանվում է հինգ տարի:

**ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝**

**Օրինական ներկայացուցիչ՝**

**Հանրակրթություն իրականացնող**

Անձնագիր՝  
 Անուն՝  
 Ազգանուն՝  
 Ստորագրություն՝  
 Հասցե՝  
 Հեռախոս՝  
 Էլ.հասցե՝

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի  
 .....  
 Տնօրեն՝  
 Ստորագրություն՝  
 Հասցե՝ Ա.Բաբաջանյան 38/1  
 Հեռախոս՝ (010) 74-21-72  
 Էլ. հասցե՝

Բանկային հաշվի համարը՝ Հայէկոնոմբանկ  
 Մետաքս մասնաճյուղ հ/հ 163218137665

**Պայմանագիրը լուծվել է հետևյալ պատճառով.**

**Օրինական ներկայացուցիչ՝** .....

**Դպրոցի տնօրեն՝** .....

**Սան՝** .....